ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. հունիսի 23-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 22-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման փակ մրցութային ընտրություն
2. Ընթացիկ հարցեր

1. Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման փակ մրցութային ընտրություն

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի համալրման փակ մրցութային ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ գիտական խորհրդի 2025 թ. ապրիլի 14-ի նիստի թիվ 8/4 որոշմամբ ընդունվել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման նոր կարգը: Նշեց, որ սույն կարգի համաձայն ԵՊՀ-ում սահմանված պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների՝ պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի և դասախոսի տեղակալման մրցույթին մասնակցության պահանջները էապես խստացվել են և հակիրճ ներկայացրեց յուրաքանչյուր պաշտոնի հավակնորդին առաջադրվող պահանջները: Ընդգծեց, որ պրոֆեսորի և դոցենտի պաշտոնների տեղակալման համար միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հրապարակված հոդվածների առկայությունը՝ որպես պարտադիր պայման, էապես նվազեցրել է սահմանված կարգով անցկացվող մրցույթի մասնակիցների

թիվը և, որ մրցույթին չմասնակցած ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատակիցների աշխատանքային հարաբերությունները կկարգավորվեն սույն կարգի անցումային դրույթներով՝ սահմանված պարզեցված բաց մրցութային կարգով մինչև 2026-2027 ուստարվա ավարտը: Հավելեց, որ ամբիոնները պետք է ակտիվորեն աշխատեն՝ պատրաստ լինեն թափուր պաշտոնների համալրման ուղղությամբ հետագա մրցութային ընտրություններին և օրակարգի առաջին հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանին:

2. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները: Ամփոփելով նշեց, որ պրոֆեսոր Ռ.Գևորգյանի հետ աշխատում է շուրջ 25 տարի, ներկայացրեց նրա՝ որպես գիտնական և ամբիոնի աշխատակից, ծավալած արդյունավետ գործունեությունը և կոչ արեց կողմ քվեարկել:

Ելույթներ:

3. Տ.գ.թ., դոցենտ, Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ Ա.Խառատյանը նշեց, որ պրոֆեսոր Ռ.Գևորգյանը ամբիոնում դասավանդում է վաղուց, քաջատեղյակ է վերջին նորամուծություններին և դրանք ակտիվորեն ներդնում է դասավանդման գործընթացում, հարգված և սիրված է իր կողմից ղեկավարվող «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ուսանողների կողմից: Հավելեց, որ արժանի է պրոֆեսորի պաշտոնի տեղակալմանը և կոչ արեց կողմ քվեարկել:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ պրոֆեսոր Ռ.Գևորգյանի անմիջական ջանքերով են պայմանավորված «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի կայացումն ու գրանցած հաջողությունները՝ շեշտադրելով ծրագրի կարևորությունը ֆակուլտետի հեղինակության բարձրացման և միջազգայնացման գործընթացներում: Անդրադարձավ նաև պրոֆեսոր Ռ.Գևորգյանի գիտական ակտիվ և հետևողական գործունեությանը և որպես ապացույց վկայակոչեց նրա մասնակցությունը պրոֆեսորի պաշտոնի համալրման փակ մրցութային ընտրությանը: Կոչ արեց գործընկերներին կողմ քվեարկել պրոֆեսոր Ռ.Գևորգյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի համար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., ասիստենտ Կարեն Սահակյան (նախագահ), տ.գ.թ., դոցենտ Ամալյա Գալստյան, ՏԿՖ «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Հայկ Արզումանյան:

ԼՍԵՑԻՆ.

Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 22-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 22 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Ալբերտի Գևորգյանին ընտրել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու ՏԿՖ գիտխորհրդի սույն որոշումը:

2. Ընթացիկ հարցեր

2.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ հարցը:

2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ քննարկվող հարցը չափազանց կարևոր և ռազմավարական նշանակություն ունի ֆակուլտետի համար, հավելեց նաև, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ստուգման և գրագողության հավանական դեպքերը բացահայտելու նպատակով այս տարվանից ուսումնական գործընթացի կառավարման e-learning հարթակում ներդրվել է «Turnitin similarity» ծրագիրը: Նշեց, որ այս համատեքստում ԵՊՀ ռեկտորատի ընդունած որոշումը

2025-2026 ուստարում լիարժեք կգործի՝ ավարտական աշխատանքները պաշտպանության կթույլատրվեն միայն ինքնատիպության տոկոսի ընդունելի՝ 65% շեմի հաղթահարման դեպքում և հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Վ.Ալեքսանյանին:

2. Դոցենտ, տ.գ.թ. Վ.Ալեքսանյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները վերլուծվել են ըստ առկա և հեռակա ուսուցման գծով ֆակուլտետում գործող բակալավրի կրթական ծրագրերի, իսկ մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները՝ ըստ մագիստրոսական կրթական ծրագրերի: Նախ, ամփոփ ներկայացրեց ըստ մասնագիտությունների ավարտական աշխատանքների գծով գնահատականների մասնաբաժինը: Զեկույցի երկրորդ մասում անդրադարձավ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքում ծագած խնդիրներին՝ գրախոսությունների, գնահատման թերթիկների լրացման ժամանակատարության, ավարտական աշխատանքների թեմաների վերնագրերի հստակեցման, գրականության/աղբյուրների ցանկի հարստացման և արդիականացման, եզրակացություններում հիմնավորումների և գնահատումների առկայության հետ կապված հարցերին: Ելույթն ամփոփեց այդ խնդիրների լուծման ուղղությամբ նախանշվող աշխատանքների համառոտ ներկայացմամբ:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Գ.Ղուկասյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Խաչատրյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Հայկ Արզումանյանը:

Հարցադրումներն առնչվում էին ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքում ծագած վերոնշյալ խնդիրներին, մասնավորապես նշվում էր, որ դրանց մի մասի լուծման համար պետք է փոփոխություններ կատարվեն ԵՊՀ բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման գործող կարգերում: Ավարտական աշխատանքների թեմաների վերնագրերի հստակեցման մասով առաջարկում էին՝ սերտ համագործակցություն ֆակուլտետի մեթոդխորհրդի և ամբիոնների միջև, նաև ուսանողի կողմից թեմայի առաջադրման հնարավորություն:

Տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, շեշտադրելով ուսանող-ղեկավար համատեղ աշխատանքի արդյունավետության բարձրացման պահանջը, առաջարկեց՝ ավարտական աշխատանքների թեմաների ընտրությունը կազմակերպել հետևյալ սկզբունքով. ուսանողը և ղեկավարը միաժամանակ համաձայնվում են համատեղ աշխատել՝ կոնկրետ ձևակերպված թեմայով:

4. Դոցենտ, տ.գ.թ. Վ.Ալեքսանյանը, հարցադրումներին պատասխանելով, ընդգծեց, որ ֆակուլտետում այս ուղղությամբ արդեն տարվում են աշխատանքներ և շեշտադրեց

դրանց համակարգման անհրաժեշտությունը՝ մասնավորապես, ամբիոնները պետք է ունենան ավարտական աշխատանքների թեմաների շտեմարաններ, որոնք պարբերաբար պետք է թարմացվեն, նշեց, որ ֆակուլտետն արդեն հանդես է եկել գործող կարգերում փոփոխություններ կատարելու առաջարկով, հավելեց, որ ուսանողի կողմից թեմայի ընտրությունից հետո ղեկավարի հայտնի լինելու հանգամանքը նպատակ ունի նվազագույնի հասցնել սուբյեկտիվ գործոնը: Ամփոփելով նշեց, որ ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին առնչվող ուսումնական գործընթացի կազմակերպումը ԵՊՀ կառավարման e-learning հարթակում էապես խստացնում է և՛ ուսանողին, և՛ ղեկավարին ներկայացվող պահանջները՝ ապահովելով առավելագույն թափանցիկություն և ակադեմիական ազնվություն:

Ելույթներ:

5. Դոցենտ, տ.գ.թ. Ա.Խառատյանը առաջարկ ներկայացրեց՝ գրախոսողը պետք է նվազագույնը մեկ բովանդակային դիտողություն ներկայացնի:

6. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց հանգամանալից զեկույց ներկայացնելու համար՝ նշելով, որ հաջորդ ուստարվա համար նմանօրինակ վերլուծությունը համեմատության հիմք կունենա և կուրվագծի գործընթացի լավարկման հնարավորությունները: Ամփոփելով հարցի քննարկումը՝ նշեց, որ բարձրացված հիմնական խնդիրները մշտապես պետք է լինեն ամբիոնի վարիչների ուշադրության կենտրոնում, քննարկվեն ամբիոններում, իսկ խնդիրների լուծման համար ամբիոնի յուրաքանչյուր աշխատակից իր պարտականությունները պետք է կատարի պահանջվող ժամկետում և առաջարկեց զեկույցն ընդունել ի գիտություն:

2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանի 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ զեկույցն ընդունել ի գիտություն:

2.2 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հաշվետվությունը:

2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գիտխորհրդի այս ուստարվա 29.04.2025թ. թիվ 8 նիստում ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ հարցը քննարկվել է աշխատանքային խմբի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի միջանկյալ զեկույցով, հավելեց, որ այս նիստում դեկանի

հանձնարարականի կատարման վերաբերյալ կլսեն վերջնական զեկույց և ձայնը փոխանցեց աշխատանքային խմբի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանին:

2. Աշխատանքային խմբի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ դեկանի հանձնարարականի կատարմանը աշխատանքային խմբի անդամներից՝ տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյան, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյան, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյան, բացի ակտիվորեն մասնակցել է «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Հայկ Արզումանյանը, և ներկայացրեց ֆակուլտետի լսարաններում առկա վիճակը՝ մատնանշելով հրատապ լուծում պահանջող խնդիրները: Հավելեց, որ լսարանների վիճակը գնահատվել է հետևյալ պարամետրերով՝ լուսավորվածություն, ամբիոն, գույքի քանակ, վարագույր, սեղան-գրատախտակ հեռավորություն, պատուհաններ և, որ լսարանների լուսանկարները փաստում են առկա կոնկրետ խնդիրները՝ դասակարգելով դրանք ըստ առաջնահերթության:

3. Հարց հնչեցրեց ֆակուլտետի դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը՝ աշխատանքային խմուբը կազմել է արդյո՞ք նախահաշիվ արձանագրված խնդիրների լուծման համար:

4. Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, պատասխանելով հարցին, նշեց, որ աշխատանքային խումբը գույքագրման աշխատանքների ընթացքում ֆինանսական հաշվարկներ չի կատարել:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով քննարկումը, շնորհակալություն հայտնեց աշխատանքային խմբին, նաև «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Հայկ Արզումանյանին աշխատանքային խմբում ակտիվ ներգրավվածության համար, նշեց, որ պետք է աշխատանք տարվի որպեսզի բարձաձայնված խնդիրների մեծ մասը լուծված լինեն 2025-2026 ուսումնական տարվա սկզբին և առաջարկեց զեկույցն ընդունել ի գիտություն:

2.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Դեկանի հանձնարարականի կատարման վերաբերյալ ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*